

Հ. Ս. Խ. Հ.

ՊՐԻՆՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ.

№ 3 ԲԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ № 3  
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
Ա. Գիտ-պրոպագանդայի սերիա

ՄԻՆ. ԳՐԻԵՎ

ԲԵՐԳԻ ՍԱԿԱՎՈՒԹՅԱՆ


ԵՎ

ԱՌՎԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ  
A 23412 II

Թարգմանեց՝ Կ. Զ.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 29  
Յերեվան — 1922



Թ. Զ. Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՍՏՈԼԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆԱԿԱՆԻ

## Բերքի սակավութեան յեւ սովի պատճառները

Ինչպես և պետք էր սպասել, յերաշտից հետո վրա հասավ սովը:

Շատերն աղետի պատճառը համարում են աստ-վածների դուրսույթը և աստանայական ուժի դավերը:

Կան շատ անկիրթ և անբարեխիղճ մարդիկ, վորոնց համար ձեռնառու չի սովյալ ժողովրդի մեջ մուխ լուր տարածել. նրանք ասում են— «այդ աստված պատժեց՝ նրա համար, վոր մարդիկ հեռացան նրանից և դադարեցին նրա կամքը կատարել»,— այսինքն այլևս չեն լսում թագավորներին, կալվածատերերին, կապիտալիստներին և նրանց հավատարիմ դաշնակից-ներին՝ բոլոր կրօնների քահանաներին:

Բայց հասկանալի չե, վոր նրանք կանխապալ սուտ են ասում և անտեղի զրպարտում են Սամարայի և Սարատովի տակավին «բարեպաշտ» գյուղացիներին:

## Այդ աստծու պատիժ ե արդյոք.

Բավական շատ աղոթեցին Սամարայի և Սարատովի շուրջը: Բազմիցս զանդերի զոզանջով դաշտ յե-լան և աղերսագին դիմեցին սրբերին, վոր նոքա լավ յեղանակ պարզեեն, ամեն տոնի թագավորներ էյին սար-քում, որհներգությամբ և ջրորհներով մաղթանքներ էյին կատարում աներում, տերտերներին կողովներով ձու տարան, և, ինչպես ընդունված ե, տերտերների ամբարները լցրին գյուղացու ալյուրի վերջին մնա-ցորդներով:

Քահանաները լավ վարձով, փայլուն շուրջառներ և կամիլավկաներ հագած, դաշտերում զոհի սեղանին՝ շուրջը աղոթք եյին կարդում, ըստ վորում նրանց աղոթքները շատ քիչ եյին տարբերվում Պերունի հեթանոսական նզովքից։ Այդ տերտերական նզովք—աղոթքներում, իհարկե, շատ նախատվեց նայե չար վոգին իր ամբողջ պիղծ ուժով։

— Ո՛վ սուրբ, ո՛վ սուրբ,—աղերսում եյին տերտերները—բազմիւր վորոտում, տիրացիւր փայլակին և աղբյուրներ թափիւր յերկրի յերեսին։ Ո՛, տեր, ահավոր ու անեղ, ինքդ դատիւր չար դէին կատաղած, իսկ մեզ, մեղավորներս, փրկիւր, անեղ տեր։ Ո՛, աստված հրաշագործ ու յերկնակյաց, ինքդ պատժիւր քո թշնամի սատանային։

Մի խոսքով Սամարայի գյուղացիները ճշտությամբ և անթերի կատարեցին այն ամենը, ինչ վոր ընդունված է յեկեղեցական ուսմունքի համաձայն, վհուկների ցուցմունքներով և զեռ պապերից վորձված՝ միջոցներով։

Ինչպես հազար տարի սրանից առաջ Սամարայի հողագործը վորձում էր խնկով ու բուրվառով ողատվել այն աղետներից, վորոնք յերբեմն—յերբեմն բնությունն ուղարկում էր նրա բնական պատահարներից անպաշտպան ցանքսերին։ Գյուղացին ջերմեռանդ աղոթում էր բոլոր աստվածներին, բայց «ամենակարող» աստվածները, իհարկե, լուռ եյին և գյուղացին «հըրաշք» չէր տեսնում։

«Հա՛, նշանանակում ե, դա անպատճառ քոչնվիւի գործ ե».

Վտմանք աղետի պատճառը վորոնում են ներկա քայքայման մեջ։ Ահա վասիկ, թե ուր հասցրին բոլրիկները այդ բարեբեր յերկիրը։

Բայց բանն այն է, վոր Մերձ Վոլդյան շրջանը միշտ եւ հայտնի յե յեղեւ վոչ միայն իր պատգարերութեամբ, այլ և մշտական սովերով: Յարական ժամանակի վիճակագրական տվյալների համաձայն 21 տարվա ընթացքում (1891—1911) Ռուսաստանի հարավարևելյան շրջաններում յեղեւ է՝ յերեք անբերրի տարի, 13 տարի՝ վատ բերքով և միայն 5 տարի բարեհաջող:

Ասենք, հենց ընդհանրապես Ռուսաստանում մասնակի սովը՝ սովորական յերևույթ է: Շարունակ Ռուսաստանի այս կամ այն նահանգում, կամ միքանի նահանգում միաժամանակ, սով է յեղեւ: 18-րդ դարում 34 սովի տարի է յեղեւ, 19-րդ դարի միայն առաջին հիսնամյակում՝ 35, իսկ իննսունական թվականներից հետո անվերջ սով է: 1902 թ. սով եր Սիբիրի միքանի շրջանում, 1903 թ.՝ Նիժնի Նովգորոդի նահանգում: Մեծ սով է յեղեւ 1906 թ.: Սոֆն այն ժամանակ բռնեւ եր 29 նահանգ՝ շուրջ 25 միլյոն մարդով: 1920 թ. սովը տարածված եր չորս նահանգում՝ Կալուգայի, Տուլայի, Ուլյովի և Յարիցկինի նահանգներում: Այնուամենայնիվ առանձնապես սուկալի յեր հռչակավոր 1891 թվականը: Այդ ժամանակ 25 նահանգ մնացեւ եր տուսնց հացի: Ամբողջ գյուղեր եյին մեռնում առվյալ տիֆից և ընդախտից (անհրա): Միայն Սամարայի նահանգում այդ տարին քաղցից մեռավ 100 հազար մարդ:

### Ինչպես Արևմտյան Եվրոպան ազատվեց սովերից.

Մինչև անցյալ դարի կեսերը տհավոր սով է յեղեւ նայեւ Արևմտյան Եվրոպայում: Յուրաքանչյուր

8—10 տարին այս կամ այն յերկրում սոսկալի սով եր  
վրա հասնում, և ինչպես մեղանում, Վոլգայի շրջա-  
նում, այնտեղ ել սովամահ եյին լինում շատ մեծ ու  
հաջառատ շրջաններ:

Իսկ այն ժամանակ Արևմտյան Եվրոպայում  
«աստվածասիրությունը» և «բարեպաշտությունը» շատ  
քարձր եյին կանգնած: Այնտեղի հողեկորականությունը  
ուժով ստիպում եր ժողովրդին աստվածներին հավա-  
տալ և վոչ մի հնարավորություն չեր տալիս դիտու-  
թյանը դարդանալու:

1125 թ. Գերմանիայի ազդաբնակությունը սովից  
կրկնակի սլակասեց: Սովի ժամանակ՝ մահացությունը,  
հիվանդությունները, թալանը, սպանությունները և  
ինքնասպանությունները սովորական յերևույթ եյին:  
1505 թ. Վենզրիայում մայրերն ու հայրերը բացի  
բաց ուտում եյին իրենց յերեխաներին: 1772 թ. միայն  
Սակսոնիայում սովամահ յեղավ 150 հազար մարդ: Իսկ  
1847 թ. աստվածասեր Իրլանդիայում սովը գերեզման  
տարավ մեկ միլյոն մարդուց ավելի:

Սակայն, ահա արդեն մոտ ութսուն տարի յե,  
ինչ Արևմտյան Եվրոպայում, չնայած ամենայնբաշ-  
տավոր տարիներին, վոչ մի սով չե լինում: Մարդ-  
կությունն այնտեղ ազատվել և դյուղացիական տնտե-  
սության այդ սոսկալի չարիքից:

Ինչո՞ւ:

Չլինի՞ թե հողն ու կլիման այնտեղ փոխվեցին  
ու ավելի հարմար դարձան դյուղացու տնտեսության  
համար:

Թե՞ եվրոպացիք, այդ բանիմաց ժողովուրդը,  
ինչ վոր հաստուկ աղաչանքի միջոց դտան, վորն ան-  
սխալ և ճիշտ և ներգործում և աստվածներին ստի-

պում եւ բարեկամական ծառայութիւններ մատու-  
ցել այնտեղի յերկրագործին:

Կամ գուցէ՞ Անգլիայում եւ Ամերիկայում գտել  
են ինչ վոր նոր «սրբեր», վորոնք ավելի զորավոր են,  
քան մերոնք, վորովհետեւ, չէ՞ կարող են, յերբ կամե-  
նան, բաղել յերկնքի սահանքները եւ անձրեւ թափել  
յերկրի վրա:

Բնավ: Հողը եւ կլիման այնտեղ մնացել են նույնը:  
Բայց բանը հենց այն է, վոր եվրոպացիք վաղուց  
արդեն վերջ են տվել կախարդական ածխիկին, թա-  
փոյններին դեպի դաշտերը, մի խոսքով, բոլոր գոյու-  
թյուն չունեցող կախարդական ուժերը ոգնութեան  
կանչելուն: Այժմ Արտասահմանում վոչ վոք գուշա-  
կութիւններ չի անում բերքի մասին:

Այնտեղ գյուղացիները գիտութեան ոգնութեանն  
են դիմում: Ռուսական «պապենական արտը»-ի վո-  
խարեն անգլիական ու ամերիկական դաշտերում վա-  
ղուց արդեն աշխատում եւ նոր, հաճախ ելիքորական  
մեքենան: Գիտութեան ոգնութեամբ այնտեղ կարողա-  
նում են հողի մեջ պահել անհրաժեշտ քանակութեամբ  
ջուր ու խոնավութիւն: Այնտեղ կարողանում են կի-  
րառել հողի մշակութեան նոր, կատարելագործված յի-  
դանակներ, ինչպեւ, որինակ, բաղմացանութիւնն եւ  
միկնուլն հողամասում (ցանքսի փոփոխման, սերմնա-  
փոխութեան իմաստով (многopolный севооборот),  
հողի արհեստական պարարտացումը, լավ հերկ ու  
մշակութիւն պահանջող բույսերի մշակութիւնը եւ այլն:

Այդ պատճառով եւ Արեւմտյան Եվրոպայում  
սով չկա: Իրենց բերրիութեամբ բոլոր կուլտուրայեւ  
զարդացած յերկրները շատ վաղուց արդեն դերազան-  
ցել են մեր թշվառական, տեխնիքային հետամնաց  
Ռուսաստանին: Յերբ Ռուսաստանում, 1906—1910 թ. թ.

ընթացքում վիճակագրութեան տվյալներով հուն-  
ձը տվել է ընդամենը 46 փութ՝ մի գեսյատինին,  
այդ ժամանակ Շվեդիայում տվել է 100 փութ, Գեր-  
մանիայում՝ 113 փութ, իսկ Բելգիայում՝ 147 փութ:

Ռուսաստանը քերրիութեամբ՝ մի շերտում է  
Հնդկաստանի, Պարսկաստանի և Չինաստանի հետ

Մեր որերում սովից տառապում են այն յերկր-  
ները, վորոնք տեխնիքայից և գիտութեանից հետ են  
մնացել և գյուղատնտեսութեան մեջ դեռ պահպանում  
են հինավուրց եռամյա սերմնափոխութեանը:

Այդ տեսակետից Ռուսաստանը գտնվում է նույն  
շերտում, ինչ Հնդկաստանը, Պարսկաստանը, Չինաս-  
տանը և այլ թույլ զարգացած յերկրները:

1866 թ. Արևելյան Հնդկաստանում (Ոստ-Ին-  
դյա) սովից մեռել է  $7\frac{1}{2}$  միլյոն մարդ: Նույնը կա-  
տարվել է Հնդկաստանում իմպերիալիստական պա-  
տերադմի ժամանակ: Սովից կոտորվածների թիվն այդ  
ժամանակ տվելի շատ է: 1870—1872 թ. թ. Պարսկաս-  
տանում կոտորվեց շուրջ  $1\frac{1}{2}$  միլյոն մարդ, այսինքն  
ամբողջ ազդարնակութեան ճիշտ քառորդը:

1877 թ. Չինաստանի հյուսիսային շրջաններում  
սովամահ է յեղել 4—6 միլիոն մարդ:

Մինչդեռ այդ բոլոր յերկրները համարվում են  
աշխարհում ամենաբարեպաշտը:

Յեվ կարելի չէ ասել, վոր յեթե այդ յերկրների  
քերրիութեանը (բերքը) չափվեր տերտերական ազոթը-  
ների քանակով, — Հնդկաստանը, Պարսկաստանը, Չի-  
նաստանը և Ռուսաստանը պետք է լինեյին աշխարհի  
ամենածաղկավետ յերկրները, մինչդեռ Ֆրանսիան,

Անդրիան և Սմերիկան արեւք ե շարունակ սովի մեջ  
լինելին և վողորմելի գոյութիւն քարշ տային:

Սովը՝ հին, անիծված ժամանակի ծնունդ ե.

Հին, ցարական Ռուսաստանում կալվածատերերը,  
կապիտալիստները և նրանց մշտական սպասավոր-բո-  
ւոր կրօնների տերտերները բնավ չէին ցանկանում,  
վոր ուս գյուղացին վատքի կանգնի և անկախ դիւք  
գրավի իրենց վերաբերմամբ:

Ճիշտ ե, կալվածատերը կարող եր ցանկանալ,  
վոր գյուղական տնտեսութիւնը վորոշ չափով բարձ-  
րանա, վորովհետեւ արագեւ նա ստիպված կը լիներ  
քաղցած գյուղացիների մի ամբողջ «վոհմակ» կերա-  
կրի իր հաշվով: Յեւ գյուղացու տնտեսութեան այդ բա-  
րելավումը կալվածատէրոջ համար բնավ ցանկալի չեր  
այնչափ, վոր արտասահմանյան շուկայում գյուղացու  
հացը իր աժանութեամբ մրցել կարողանար կալվածա-  
տիրոջ հացի հետ:

Իսկ գյուղի սովը միանգամայն ձեռնտու չեր կա-  
պիտալիստի համար:

Սովյալ գյուղացուն շատ հեշտ ե նեղելն ու շա-  
հագործելը: Սովի տարին կալվածատերը գյուղացուն  
տալիս եր չնչին փոխառութիւն՝ դրամով կամ հացով և  
այնուհետեւ ստրկացնում եր նրան ու դարձնում «ցմահ  
հնազանդ»:

Կալվածատերերի դաշտերում վաղուց արդեն աշ-  
խատում եր նոր կատարելագործված մեքենան: Իր և  
վանքապատկան հողերը հոգևորականութիւնը վոռո-  
գում եր արհեստական միջոցներով (առուներ շինելով),  
արտասահմանից ստանում եր լավ, ընտիր սերմեր, իր  
«պապենական կալվածներում» հաճախակի սերմնափո-  
խութեան կատարելագործված յեղանակներ եր կիրա-

ուում, այսինքն բարձրացնում եր իր բարեկեցությունը վոչ թե կախարդական միջոցներէ ու մաղթանքներէ շնորհիւ (այդ հանձնարարում եր նա միայն խավարամիտ ժողովրդին), այլ գիտության, տեխնիքայի ոգնությամբ ու գիտնական հոգագետներէ աջակցությամբ:

Իսկ խավարամիտ և իրավադուրկ գյուղացին, ինչպես հարյուր, յերկու հարյուր տարի մեղնից առաջ, իր փոքրիկ միջնադարյան ու բնության հանդեպ անպաշտպան դաշտը հերկում եր ճալապինական արորով:

Ժողովրդի մեջ հողատիրական գիտելիքներ չէին տարածում: Անհրաժեշտ հողատիրական գիտելիքներէ փոխարեն գյուղերում բացում էին ծխական դպրոցներ և ժողովրդին դաստիարակում էին «ժամադրքով»:

### Սովի առաջին պատճառը՝ գյուղացու խավարամտությունն և.

Այսպիսով գալիս ենք այն յեզրակացության, վոր սովի առաջին պատճառը գյուղացու խավարամտությունը, տգիտությունն և, այն և, վոր տեխնիքայի գործում մենք շատ հետ ենք մնացել Եվրոպայից, այն, վոր մեր ուսական գյուղացիական տնտեսությունը գիտությունից հեռու յե, կտրված և:

Եր խավարամտության, գիտության ծանոթ չը լինելու և տեխնիքական հետամնացության պատճառով, մենք այժմ տեսնում ենք, թե վորպիսի մեծ տուրք և տալիս գյուղացին՝ հարյուր հազարավոր սովամահությունների գնով:

Յեւլ ամեն մի գյուղացի, վորը դեռ չի ընկել այդ փորձանքի մեջ, բայց գիտե վոլգայի շրջանի քաղցած գյուղացիների անորինակ տանջանքների մասին, պետք և այժմ լուրջ մտածի և հարց տա իրեն.

—Արժե՞, արդյոք ընդհանրապես այսուհետե վճարել այդ ծանր մահատուրքը: Յիվ ավելի լավ չե՞ մի կողմ գնել հին պատական մշտիկը և բարեկամանալ վստահելի ու ճշմարիտ գիտության հետ:

Սովի յերկրորդ եւ յերրորդ պատճառները՝ իմպերիալիստական յեւ քաղաքացիական պատերազմներն են.

Սակայն ներկա սովի աղետը առանձնապես ծանր է գյուղացիների համար: Սովին մեծապես նպաստեց Ռուսաստանի տնտեսության ընդհանուր քայքայումը, վորի համար ամենից առաջ պատասխանատու ու մեղավոր է Նիկոլայի ժամանակ ռուսական և արտասահմանյան դրամատերերի սկսած իմպերիալիստական պատերազմը:

1914 թ. ոգոստոսի 1-ից ցանքսն արդեն սկսում է ընկնել: Պատերազմի ընթացքում գյուղական տնտեսության համար անհրաժեշտ լծկան անասունների քանակն էլ ընկնում է՝ 35 միլյոնից մինչև 17 միլյոն: Այն գործարանները, վոր առաջ գյուղացու համար զանազան գյուղատնտեսական գործիքներ էյին պատրաստում, յերեք տարի յե, ինչ աշխատում են բացառապես պատերազմի կարիքների համար: Ճարական բանկիրներին ու կապիտալիստներին, վորպես թնդանութային միտ, գյուղացին տալիս է իր լավագույն զավակներին և այդ պատճառով շատ գյուղական ընտանիքներ կորցնում են աշխատանքի ամբողջ սեղոններ:

Դեռ 4½ տարի սրանից առաջ առաջին հսկրոմենշեիկական համագումարը յերկրի դրությունը համարեց կատաստրոֆիկ, այնպես վոր, հենց մենշեիկների ու հսերների խճատովանությամբ, Խորհրդային

Իշխանութիւնը Ռուսաստանի տնտեսութիւնը ստա-  
ցաւ քայքայւած ու ավեր վիճակում:

Բայց այդ «կատաստրոֆիկ դրութիւնը» ուժե-  
ղացաւ քաղաքացիական պատերազմի շնորհիւ, մի պա-  
տերազմ, վոր մենք չեյինք ուզում վարել, վորը մեր  
վզին փաթաթեցին կապիտալիստները և վորը, պաշտ-  
պանելով մեր ազատութիւնը, մենք մղում եյինք աշ-  
խարհի 18 կառավարութիւններէ դեմ:

Այդ քաղաքացիական կռիւն ևլ իր հերթին նպաս-  
տեց սովին: Յետե նայենք՝ սովից այժմ ավելի տա-  
ռապող վայրերի քարտեղին, մենք կը խեփենք, վոր  
ամենից շատ տուժել են այն նահանգները, վորոնց  
միջով բազմիցս անցել են սպիտակ բանակները, կամ  
վորտեղ, ինչպես որինալ Ուկրաինայի արևմտյան  
շրջաններում, 17 կառավարութիւն և վոխովել:

*Սովի համար մեղավոր են արդոք բոլշեւիկները.*

Իսկ յետե այդպէս և, առաւ կարելի՞ յե արդ-  
ոք մեզ հասած չարիքի համար մեղադրել բոլշեւիկ-  
ներին: Գնահատելով բանվորների և գյուղացիների  
կյանքը, միշտ բոլշեւիկները տարեկան մի քանի ան-  
գամ պատմավոր հաշտութեան առաջարկներ չեյին անում  
Ռուսաստանին խեղդողներին, վորպէսզի միայն, վեր-  
ջապէս, դուրս բերին յերկիրը պաշարւած ամրոցի վի-  
ճակից և գյուղական տնտեսութեան ցավոտ վերքերն  
սկսեն բուժել:

Տեղերում գյուղացիներն այժմ սկսում են հաս-  
կանալ, վոր բոլշեւիկները նրանց շահերի պաշտպանն  
են, վոր նրանք ձգտում են գյուղը լուսավորելու,  
ամեն տեղ, համարյա ուժով, գրագիտութիւն տարա-  
ծելու, ամեն կերպ աշխատում են վարդապետել ու կա-  
տարելագործել գյուղացու հետամնաց տնտեսութիւնը՝

գիտական յեղանակներով, այնպես, Վոր վերջի վերջո՝  
Ռուսաստանն ել սով չը տեսնի, ինչպես չի տեսնում  
Արևմտյան Եվրոպան, մյուս քաղաքակրթված յեր-  
կրները:

Այդ բոլորից հետո սովի համար բուշակներին  
մեղադրել կարող են միայն անբարեխիղճ մարդիկ, այն  
և նրանք, վորոնց համար քաղաքականապես ձեռնտու  
յե ժողովրդի մեջ մութ լուր տարածելը, վորոնք ցան-  
կանում են Ռուսաստանում վերականգնել ցարական  
ստրաժնիկի ու ժանդարմական մտրակի իշխանու-  
թյունը:

Ի հաճություն իրենց արտասահմանյան բարե-  
կամների, ցարական կառավարության այդ սպասա-  
վորները առանց ամաչելու պղտորում են խավարամիտ  
ժողովրդի միտքը, խաղում են Վոլգայի շրջանում մեռ-  
նող գյուղացիների բախտի հետ, վորպեսզի հետո իրենք  
գյուղացու վզին նստած, վերականգնեն իրենց իշխա-  
նությունը Ռուսաստանում և հետ ստանան իրենց  
կորցրած հողը, կուշտ, անհոգ ու աղայական կյանքը:

Բայց կապիտալի այդ հավատարիմ սպասավոր-  
ների վերջին հույսերն ել կը խորտակվեն: Գյուղացի-  
նարդեն սովորել և ըստ արժանվույն գնահատել նման  
խորհրդատուներին: Գառան մորթի հագած՝ նրանք  
գալիս են գյուղացու մոտ և յերբեմն աղաղակում են  
ինչ վոր նոր, տարորինակ «խորհուրդներ» ի մասին,  
ուր չը պետք և լինին կոմունիստները, յերբեմն ել  
հանդես են գալիս, տեսնք, «անպատված հավատը»  
պաշտպանողի դերում, իսկ վերջին հաշիվով գյուղացու  
համար բերում են նոր շղթաներ ու նոր ստրկու-  
թյուն:

# ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձ Ձ

ՅԻՆԸ

1. Կարլ Մաքս—Վարձու աշխատանք ու կապիտալ, Թարգմ. Ստ. Չմհումյանի . . . . . 15 Կ.
2. Ռեինալդի ծրագիր պատմություն . . . . . —
3. Ռեինալդի ծրագիր արվեստի . . . . . —
4. Ի. Տուպոլով—Հարկավոր և արդյաք բանվորներին ու գյուղացիներին սեփական գործ և ինչի համար . . . . . 10 Կ.
5. Գումուսիասի առաջին այբբենաբանը . . . . . 15 Կ.
6. Գրպանի որացույց 1922 թ. . . . . 3 Կ.
7. Ալ. Մյասնիկյան (Ալ. Մաքսունի)—Մեր քաղաքա-կանությունն ու հերթական խնդիրները . . . . . 5 Կ.
8. Հ. Նավակասիկյան—Դեպի միջին անտիկ (ձեռ. դատ.) . . . . . 25 Կ.
9. Պասի որացույց 1922 թ. . . . . 15 Կ.
10. Հ. Նավակասիկյան—Հանրահաշիվ ձեռագիր. դատարան . . . . . —
11. Հ. Մանանդյան.—Հայաստանի պատմությունը թուրք —թաթարական արշավանքների շրջանում (ձեռագիր. դատարան.), ապագրվում է . . . . . —
12. Գ. Եղիկյան—Աշխատանքի գործը, ձեռագիր (ապագրվում է) . . . . . —
13. Ռեինալդի ծրագիր մաթեմատիկայի . . . . . —
14. Ռեինալդի ծրագիր աշխարհագրություն . . . . . —
15. Սուրխաթյան—Դեպի գահալուծ (քրիստոնեություն), ապագրվում է . . . . . —
16. Լ. Ն. Նիկոնով—Բույսի կյանքը (պարզ փորձերով և 12 նկարով, Թարգմ. Ա. Յ. Պ. ապագրվում է . . . . . —
17. Ալ. Հակոբյան—Փիղիկա (ձեռ. դատ.) ապագրվում է . . . . . —
18. Բժ. Վ. Արծրունի—Անատոմիա (ձեռ., դատար.) . . . . . —
19. Նոսանե . . . . . 20 Կ.
20. Ալեքսանյանի դպրոց (մայրենի լեզվի դասագիրք) Բ. տարի, ապագրվում է . . . . . —
21. Ն. Լեւին—Պարենհարզի մասին, Թարգմ. Թ. Ա. . . . . 15 Կ.
22. Դեպի լույս (այբբենաբան համակարգիչների համար), կազմեց Հովհաննես Տեր-Միքայելյան . . . . . 20 Կ.
23. Պալիբոսկի—Ռուսաց պատմությունը արվեստագիտության գծերով, Թարգմ. Լեւ (ապագրվում է) . . . . . —

24. Հովհ. Նավակտօսիկյան — Անալիտիկ յերկրաչափության  
(ձեռագիր. դասախոս.), տպագրվում է —
25. Մրոչեկ. — Յեռանկյունաչափություն, թարգմ. Արշակ  
Տանյանի. (ձեռագիր) տպագրվում է —
26. Մ. Արեղյան. — Առաջնորդ Հայոց Լեզվի նոր ուղղա-  
գրության . . . . . 8 է.
27. Միլ. Գորել. — Յերքի սակագրության և օովի  
պատճառները, թարգմ. Կ. Հ. . . . . 5 է.
28. Կ. Մարե լել Յ. Յնգելս. — Կամօնիտական Մանի.  
Ֆիսա, թարգմ. բնագրից Գ. Մակինցյանի . . . . . —
29. Կ. Ռադեկ. — Հակոբեմբերյան հեղափոխությունը և նրա  
տեղը պատմության մեջ. թարգմ. Կ. Հ. (տպ.) . . . . . 5 է.
30. Ինչպե՞ս կազմել հերքաբերում, — ըստ Նիկոնովի կազմեց.  
Ա. Մուշեղյանի. . . . . 10 է.
31. Ա. Տերտերյան. — Հայոց նոր դրամատիկությունը (վիմատիա) —
32. Վ. Բիստրյանսկի. — Պայքար աշխարհի բարեքնեի հա-  
մար, թարգմ. Կ. Հ. (տպ.) . . . . . —
33. Հայաստանի պատկածական կադմակերպության ծրագիր  
և կանոնադրություն . . . . . —
34. Մ. Արեղյան — Համապատասխանություն հայոց գրականու-  
թյան պատմության (վիմատիա) տպագրվում է —
35. Ռեինակելի ծրագիր մայրենի լեզվի . . . . . —
36. Դաւրենկեր Բ. Յարի . . . . . 80 է.
37. Գ. Ն . . . . . 1 է.
38. Ա. Մուսիլյան — Սոցիալիտ-հեղափոխականներն Անդրկով-  
կասում (թուրքիկ ակնարկներ), տպագրվում է —



[054.]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ЦЕНА

237/2

1. Շապհա Բագրատունվո պատմություն—աշխատ. Գ.  
Տեր-Մկրտչյանի և Մեսրոպ յեպիսկոպոսի 1 ա.
2. Հայ—Ռուս. որինեցացիայի ծագման խնդիրը—աշ-  
խատ. Աշոտ Հովհաննիսյանի 1 ա.
3. Աբրահամու խոսովանողի վկայք Արեվելից—  
աշխատ. Գ. Տեր-Մկրտչյանի 1 ա. 50 կ.
4. Ռուսահայերի հասարակական զարգացումը—  
աշխատ. Գ. Անանյանի 2 ա. —
5. Բանբեր Եղմիածնի Էլիսակյան Ինստիտուտի—գիրք  
Ա. և Բ. 10 ա. —

Լույս տեսած գրքերը ծախվում են Լուսժողովմատի գրա-  
խանութում, Արովյա փող. № 20, Յերեվան.

Գինը 5 կոպ.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003251